ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2020թ. թիվ 761-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 189-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1535-Ն որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 189-Ա որոշման թիվ 124 հավելվածով հաստատված կանոնադրության մեջ կատարել փոփոխություն և լրացում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. սեպտեմբերի 17-ի թիվ 1535-Ն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը:

3. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Ավագյանին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

10/12/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 12
ք.Վանաձոր

Հաստատված է
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հոկտեմբերի 12-ի
թիվ 761-Ա որոշմամբ

Կազմված է «___» _____2020թ.
Բաղկացած է 2 էջից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՍՊԻՏԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 23.01.2003թ.
ԳՐԱՆՑՄԱՆ N 90.210.00360
ՀՎՀՀ 06802178
_____ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԹԻՎ _____ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«____» _____ 2020թ.

_____ _____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՊՈԱԿ-ի կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1. 125-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«125. Դպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Պետական գույքի վարձակալության տրամադրման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 9-ի N 731, 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:».

2. 125-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 125.1-ին կետով՝

«125.1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դպրոցին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես դպրոցին իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան դպրոցին փոխանցելու համար»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է _____ գրանցված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության անբաժանելի մասը: